# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյան | Էմիլ Գրիգորյան | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | 1. «Համագործակցության համար» մեդալը (այսուհետ՝ մեդալ) պատրաստվում է արույրի հատուկ համաձուլվածքից: Մեդալի հիմնական գույնը դեղինն է: Մեդալը 40մմ/±5մմ լայնությամբ բազմանկյուն է, որի դիմերեսին կենտրոնում՝ ընդհանուր պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության արծաթագույն խորհրդանիշը: Խորհրդանշանին հաջորդում է 30մմ/±5մմ տրամագծով շրջանը, որի վրա ձախ կողմում կորաձև գրված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» և աջ կողմում վերևից դեպի ներքև կորաձև գրված են ԱՆԳԼԵՐԵՆ՝ «FOR COOPERATION» և ՌՈՒՍԵՐԵՆ՝ «ЗА СОТРУДНИЧЕСТВО» բառերը: Խորհրդանշանը ներքևի մասում՝ աջ և ձախ կողմերից եզերված է ոսկեգույն դափնու ճյուղերով: 2. Մեդալի դարձերեսին կենտրոնում գրված են՝ հայերեն՝ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ», անգլերեն՝ «STATE PROTECTION SERVICE», ռուսերեն՝ «СЛУЖБА ГОСУДАРСТВЕННОЙ ОХРАНЫ» բառերը: 3. Մեդալի սկավառակը ոսկեգույն կապօղակի միջոցով միացված է մետաղյա հնգանկյուն կախիչին, որի միջոցով մեդալը՝ ասեղային ամրակի օգնությամբ ամրանում է համազգեստին: Հնգանկյուն կախիչի ամենալայն մասը 44.5-ից 46.2 մմ է, ամենաբարձր մասը՝ 48-ից 51 մմ: Կախիչը պաստառված է 23.5-ից 24.5 մմ լայնություն ունեցող ժապավենով, որը գործված է բաց մոխրագույն, կապույտ և դեղին զոլակներով: Մեդալի դարձերեսին գտնվում է դուրս ցցված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մեխանիզմով ասեղային ամրակ՝ տարբերանշանը համազգեստին ամրացնելու համար: Մեդալի տուփ: Տուփի չափսերը՝ 100x110մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում մեդալի չափսերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով:Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Տուփի դիմերեսի վրա առկա է համապատասխան լոգոտիպի UV տպագրություն: Տուփի գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Թույլատրելի շեղումը ±5մմ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |